PO Box 19085
Long Island City, NY 11101

ՎԵՐԱՑՎԱԾ ԱԲՄՈՂՋ ՊԱՐՏՔԸ՝

ՊԱՐՏԱՏԵՐ՝

ՀԱՇՎԵՀԱՄԱՐ՝

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՍԱԹԻՎ՝

ՆՎԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՊԱՀԵԼ ՍԱ ՈՐՊԵՍ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հարգելի [Name],

Մենք Ձեզ գրում ենք, որպեսզի լավ լուր հայտնենք. Դուք այլևս պարտք չեք բժշկական ծառայությունների վճարը, որը նշված է այս նամակի աջ կողմում:

Պարտքն ամբողջությամբ չեղարկել է Լոս Անջելեսի Շրջանի «Բժշկական պարտքի մարում» ծրագիրը (County of Los Angeles Medical Debt Relief Program)՝ համագործակցելով Undue Medical Debt-ի հետ, որը շահույթ չհետապնդող համազգային կազմակերպություն է:

Այս բժշկական պարտքի չեղարկումը նվեր է՝ առանց փոխհատուցման, և չի համարվում ձեզ համար վաստակած եկամուտ: Դուք այլևս այս պարտքը որևէ մեկին վճարելու պարտավորություն չունեք, և եկամտային հարկեր չկան:

Հաջորդ էջում բացատրվում է, թե ինչու է այս ծառայությունը մատուցվել: Դուք կարող եք Լոս Անջելեսի Շրջանի «Բժշկական պարտքի մարում» ծրագրի մասին իմանալ ph.lacounty.gov/RelieveMedicalDebt կայքում, իսկ Undue Medical Debt-ի մասին՝ www.UndueMedicalDebt.org կայքում:

Ահա այն կարևոր կետերը, որոնց մասին պետք է անհապաղ իմանաք.

- Տրամադրվող օգնությունը միայն այս նամակում նշված բժշկական հաշվի(հաշիվների) համար է:
- Ձեր գաղտնիությունը պաշտպանված է: Բժշկական տվյալները մնում են բժշկի մոտ կամ հիվանդանոցում:
- Եթե այլ վճարումների համար ձեզ օգնություն է անհրաժեշտ կամ ցանկանում եք դիմել ֆինանսական օգնության այլ բուժօգնության համար, խնդրում ենք ստուգել հաջորդ էջում նշված աղբյուրները: Դուք ունեք ֆինանսական օգնության իրավունք, և կան օրենքներ, որոնք պաշտպանում են ձեզ անարդար գանձումներից:

Խնդրում ենք հաստատել, որ Դուք ստացել եք այս նամակը, որպեսզի հետևենք, թե ինչ ազդեցություն ենք թողնում:

Օգտագործեք հղումը/QR կոդը՝ մեզ օգնելու բարելավել պարտքերի մարման այս ծրագիրը և ներկայացնելու ցանկացած հարց: Դուք պարտավոր չեք նշել ձեր անունը, և ձեր տվյալները կմնան գաղտնի, եթե Դուք թույլ չտաք մեզ դրանք փոխանցել ուրիշներին: Դուք նաև կմասնակցեք մրցանակային խաղարկությանը (տե՛ս մանրամասները հակառակ էջում):

Եթե ուզում եք մեզ հետ կապ հաստատել նամակով, գրեք հետևյալ հասցեին՝ Undue Medical Debt- Constituent Services, 28-07 Jackson Ave, 5th Floor, Long Island City, NY 11101.

Պատասխանելու համար ձեր հեռախոսով սկանավորեք QR կոդը կամ այցելեք

Սպասում ենք Ձեր պատասխանին

Նամակը, որը կստանաք փոստով, ստորագրված կլինի Լոս Անջելեսի Շրջանի «Բժշկական պարտքի մարում» ծրագրի (County of Los Angeles Medical Debt Relief Program) Վերահսկիչների խորհրդի և Undue Medical Debt կազմակերպության նախագահի կողմից

Armenian

Հաճախակի տրվող հարցեր

Ի՞ՆՉ Է ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Լոս Անջելեսի Շրջանը մեկնարկել է «Բժշկական պարտքերի մարում» ծրագիրը (Medical Debt Relief Program)՝ ֆինանսապես ծանրաբեռնված բնակիչների բժշկական ծառայությունների պարտքը չեղարկելու համար: Այս ծրագիրը մի մասն է բժշկական ծառայությունների պարտքի բեռը կանխելու և նվազեցնելու ավելի լայն ռազմավարության, որը ձեռնարկել են Վերահսկիչների խորհուրդը և «Բժշկական պարտքերի հարցերով» միությունը: Մոտ 150000 իրավասու բնակիչների պարտքերը մարելուց բացի, այն ներառում է օրենսդրական աջակցություն, տվյալների հավաքագրում, ֆինանսական օգնության ծրագրերի բարելավում և սպառողների համար միջոցների ընդլայնում: Ավելին իմանալու համար այցելեք ph.lacounty.gov/MedicalDebt:

ԻՆՉՈ՞Ւ ԵՔ ԴՈՒՔ ՍԱ ԱՆՈՒՄ

Undue Medical Debt կազմակերպությունը ձգտում է օգնել բժշկական պարտքերով ծանրաբեռնված ընտանիքներին և անհատներին՝ վերցնելով այդ պարտքերն իր վրա և մարելով դրանք: Բժշկական պարտքը հաճախ առաջանում է չնախատեսված, անսպասելի հիվանդությունների և վթարների պատճառով: ԱՄՆ մեծահասակների մոտ մեկ երրորդը դժվարանում է փակել անսպասելի առողջապահական ծախսերը: Բժշկական պարտքը նաև սնանկացման հիմնական պատճառն է ԱՄՆ-ում: Շատ տարածքներում և բազմաթիվ պատճառներով հիվանդների՝ ապահովագրության վճարումից հետո մնացած պարտքը գնալով աճում է, և բամաթիվ մարդիկ շարունակում են չունենալ ապահովագրություն: Համագործակցելով Լոս Անջելեսի Շրջանի հետ՝ մենք սա անում ենք տնտեսական հնարավորությունները բարելավելու և ընտանիքներին առողջ կյանքով ապրելու հնարավորություն տալու համար:

Ի՞ՆՉ Է UNDUE MEDICAL DEBT-Ը

Undue Medical Debt-ը (նախկինում՝ մինչև 2024 թվականի ապրիլը, հայտնի որպես RIP Medical Debt) շահույթ չհետապնդող, համազգային բարեգործական կազմակերպություն է, որը միջոցներ է հավաքում նվիրատուներից, այդ թվում՝ տեղական և նահանգային կառավարություններից, և օգտագործում է այդ միջոցները բժշկական պարտքերն իր վրա վերցնելու և դրանք մարելու համար: Մեր IRS EIN համարն է 47-1442997: 2014 թվականին մեր հիմնադրումից ի վեր (որպես Medical Debt Resolution, Inc.)՝ մենք մարել ենք ավելի քան 14 միլիարդ դոլարի բժշկական պարտք՝ օգնելով ավելի քան 9 միլիոն մարդու:

ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ո՛չ: Վստահեցնում ենք, որ նամակում նշված պարտքն այլևս չկա, և Դուք պարտավոր չեք որևէ գործողություն ձեռնարկել: Մենք ձեռք ենք բերել պարտքը, և այն ընդմիշտ մարվել է: Սա բարեգործական գործողություն է, որը հնարավոր է դարձել Լոս Անջելեսի Շրջանի և Undue Medical Debt-ի առաքելությանը աջակցող այլ նվիրատուների շնորհիվ:

Խնդրում ենք նկատի ունենալ՝ հնարավոր է, որ Undue Medical Debt-ը այլևս չկարողանա բժշկական պարտքեր ձեռք բերել Ձեր տարածքում: Բժշկական պարտքերը չեղյալ համարելու մեր կարողությունը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ նվիրատուների ֆինանսավորման առկայությունից:

Եթե պատասխանեք և Ձեր պատմությունը պատմեք այս նամակը ստանալուց հետո 14 օրվա ընթացքում (օգտագործելով QR կոդը կամ bit.ly հղումը), դուք կմասնակցեք պատահականության սկզբունքով արվող վիճակախաղի՝ 100 դոլար արժողությամբ նվեր-քարտ շահելու համար: Ստացողները ընտրվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ և տեղեկացվում են էլեկտրոնային փոստով:

ԻՆՉՈ՞Ւ Է ԻՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ

Ձեր վարկային պատմության վերաբերյալ թեթև հարցում (soft inquiry) է արվել, որեսզի Undue-ն որոշի բժշկական պարտքի մարման ձեր իրավասությունը: Թեթև հարցումները նշվում են ձեր վարկային հաշվետվությունում, բայց չեն ազդում ձեր վարկային պատմության վրա:

ԴՈՒՔ ԻՄ ԲՈԼՈ՞Ր ՊԱՐՏՔԵՐՆ ԵՔ ՎԵՐԱՑՐԵԼ

Մենք ձգտում ենք հնարավորինս շատ պարտքեր վերացնել, բայց հաճախ կարողանում ենք ձեռք բերել միայն որոշ առողջապահական պարտքեր: Եթե կան առողջապահության համար մի քանի վճարումներ, հնարավոր է, որ մենք որոշ պարտքեր վերացնենք, սակայն մյուս պարտքերը մնան չվճարված: Եթե ունեք հարցեր մարված որոշակի պարտքերի վերաբերյալ, խնդրում ենք կապ հաստատել պարտատիրոջ հետ, որի տվյալները նշված են այս նամակի առաջին էջի վերին աջ անկյունում:

Եթե կարծում եք, որ թվարկված պարտքն արդեն վճարված է, ի սկզբանե Դուք այդ պարտքը չեք ունեցել կամ եթե ունեք այլ հարցեր ձեր նամակի վերաբերյալ, խնդրում ենք օգտագործել QR կոդը կամ այցելել

ՄԱՐԴԿԱՆՑ ՕԳՆՈՂ ՄԱՐԴԻԿ

Մեր առաքելությանն ու նպատակին հասնելու համար մենք կախված ենք անհատների, ընկերությունների, բարեգործական կազմակերպությունների և կառավարության նվիրատվություններից: Undue Medical Debt-ի մասին ավելին իմանալու համար այցելեք մեզ՝ https://www.UndueMedicalDebt.org:

Եթե Ձեզ օգնություն է անհրաժեշտ այլ այլ վճարումների համար կամ ցանկանում եք դիմել ֆինանսական օգնության համար, տեղեկատվական աղբյուրները ու խորհուրդները հասանելի են հետևյալ հասցեում՝ ph.lacounty.gov/MedicalDebt: Կարող եք նաև զանգահարել Լոս Անջելեսի Շրջանի Neighborhood Legal Services («Իրավաբանական ծառայություններ թաղամասում») (800) 896-3202 հեռախոսահամարով: